ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՏԻԳՐԱՆ ԵՆՈՔՅԱՆԻՆ

# Եռամսյակային հաշվետվություն

## ՀՀ ՆԳՆ աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչության ռեեստրի բաժնի փորձագետ Լուսինե Արմանի Ներսիսյանի կողմից 25.02.2026-25.05.2026թ. ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հարգելի պարոն Ենոքյան,

ՀՀ ՆԳՆ աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագրի համաձայն՝ 25.02.2026-25.05.2026թ. ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

Մասնակցել եմ՝

1. աղետների ռիսկի նվազեցմանն ու արձագանքմանն առնչվող տեղեկատվության հավաքագրմանը, ամփոփմանը և վերլուծմանը, անհրաժեշտության դեպքում՝ ոլորտային ուսումնասիրությունների կատարմանը,
2. աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացմանը,
3. հետաղետային վերականգնման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման համակարգմանը,
4. հետաղետային վերականգնման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացմանը:

Իրականացրել եմ՝

1. արտադրական վտանգավոր օբյեկտների (այսուհետ ԱՎՕ) գրանցումներ,
2. ԱՎՕ շահագործող անձանց փոփոխության, հասցեափոխության, անվանման ճշգրտման, կոնսերվացման, ապամոնտաժման, վերազինման վերաբերյալ աշխատանքներ,
3. Հավատարմագրված անձանց կողմից ներկայացված եզրակացությունների ԱՎՕ գործերում կարման աշխատանքներ,
4. Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, ինչպես նաև Պետական մարմինների, ԱՎՕ

շահագործողների, սնանկության գործով նշանակված կառավարիչների և ՀՀ սնանկության դատարանի, փաստաբանների կողմից ուղղված հարցումների պատասխանների պատրաստման աշխատանքներին:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ աղետների և
արտակարգ այլ իրավիճակների
կառավարման վարչության ռեեստրի բաժնի
փորձագետ

Լ.Ներսիսյան

«25» ___05___ 2026թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում

եմ ______________________ :

ՀՀ ՆԳՆ աղետների և
արտակարգ այլ իրավիճակների
կառավարման վարչության պետ

Ա.Կարապետյան

«25» ___05___ 2026թ.